ՎՐԵԺ ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ագրարային համալսարանի հայոց պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

ՄՀԵՐ ՄԵԼԻՔ–ԲԱԽՇՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնական և գիտամեթոդական գործունեության համակարգման վարչության պետ–պրոռեկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ–ԹՈՒՐՔԻԱ–ՎՐԱՍՏԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՏԴ 340:809.121.2

Հոդվածում հեղինակները կոնկրետ փաստական նյութի վրա փորձել են լուսաբանել Խորհրդային Ռուսաստան–Քեմալական Թուրքիա–Մենշեվիկյան Վրաստան հարաբերությունների այն ոլորտները, որոնք այս կամ այն չափով շոշափում էին 1920 թ. Հայաստանի Հանրապետության կենսական շահերը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ փոխհարաբերություններ, լուսաբանում, հարևաններ, պատերազմ, խեղաթյուրել:

Նախկին Խորհրդային հանրապետություններում խորհրդային համակարգի փլուզումը հնարավորություն տվեց մեզ՝ պատմաբաններիս, ձերբազատվել անցյալի գաղափարախոսական կապանքներից և մեր երկրների հատկապես նորագույն շրջանի պատմության շարադրանքը դնել նոր, անկողմնակալ ու բազմակողմանի հիմքերի վրա: Այստեղ պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ հարևան ժողովուրդների ոչ շատ վաղ անցյալի փոխհարաբերությունների պատմության, կնճռոտ էջերի անաչառ ու բազմակողմանի լուսաբանումը, այդ պատմության մեջ ընդունելի ու մերժելի կողմերի ճիշտ բացահայտումը և վերջին հաշվով պատմական ճշմարտության վերհանումը, մեծապես կարող են նպաստել այդ ժողովուրդների միջև փոխըմբռնման ու փոխվստահության մթնոլորտի ավելի պարզեցմանն ու խորացմանը: Դրան հակառակ, պատմական ճշմարտությունից խուսափելը, այն կամա թե ակամա շրջանցելը, պատմական փաստերին ու իրադարձություններին ճիշտ մեկնաբանություններ ու գնահատականներ չտալը և, որպես դրանց հետևանք՝ պատմության խեղաթյուրումը, կարող է բացասական ազդեցություն ունենալ հարևան երկրների փոխհարաբերությունների հետագա ճակատագրի վրա:

Ելնելով վերը նշվածից, փորձենք համառոտ անդրադառնալ 1920–1921 թթ. Խորհրդային Ռուսաստան–Քեմալական Թուրքիա–Վրաստան փոխհարաբերություններին, Հայաստանին վերաբերվող մասով:

Առաջին աշխարհամարտում Սուլթանական Թուրքիայի կրած պարտությունից հետո թուրք բարձրաստիճան սպայակազմից առանձնանում է գեներալ Մուսատաֆա Քեմալ փաշան, որն էլ հենց հանդիսանում է Քեմալական Թուրքիայի հիմնադիրը: Խորհրդային պատմագրու-

թյան մեջ տարածում ուներ այն կարծիքը, թե իբր Քեմալական շարժումն ուներ ազգային ազատագրական բնույթ և ուղղված էր միջազգային իմպերիալիզմի դեմ: Մեր օրերում ավելի ու ավելի մեծ թվով ուսումնասիրողներ, այդ թվում և առանձին թուրք ուսումնասիրողներ, հակված են կարծելու, որ Քեմալական շարժումը ըստ էության ազգային–ազատագրական շարժում չէր, այլ շարժում էր ընդդեմ Թուրքիայի բնիկ ազգային փոքրամասնությունների, և առաջին հերթին հայերի դեմ, որի նպատակն էր կյանքի կոչել շարժման առաջնորդ Մուստաֆա Քեմալի «Թուրքիան՝ թուրքերի» հայտնի կարգախոսը: Իսկ այդ շարժմանը ազգային–ազատագրական ինչ–ինչ «երանգներ» տալը և իբր իմպերիալիզմի դեմ պայքարի կեղծ կարգախոսը Քեմալին անհրաժեշտ էին բոլշևիկյան Ռուսաստանին հաճոյանալու և նրա աջակցությունը ստանալու համար:

Այսպես, օրինակ. 1973 թվականին Փարիզում հրատարակված «Օսմանյան կայսրության վախճանը՝ Կարմիր սուլթանից մինչև Մուստաֆա Քեմալ» գրքում հեղինակը՝ ֆրանսիացի դիվանագետ Ժան Պոլ Գարնիեն գրում է, որ հիացած կրակի բոցերի մեջ գտնվող գերազանցապես հայերով ու հույներով բնակեցված Զմյուռնիայի պատկերով՝ քեմալականների պարագլուխն անամոթաբար բացականչել է, թե մեր հայրենիքը վերջնականապես ազատագրվեց դավաճաններից ու առևտրականներից: Այսուհետև ազատագրված ու մաքրազարդված Թուրքիան կպատկանի միայն և միայն թուրքերին:

Թուրք ժամանակակից հետազոտող Թ. Աքչամը խոստովանում է, որ հայերի ցեղասպանությունից թուրքական պետությունն իրական օգուտներ քաղեց և հնարավորություն ստացավ Անատոլիայում (Արևմտյան Հայաստան.– Վ. Ռ.) ստեղծելու ազգային պետություն: Այնուհետև զարգացնելով իր միտքը՝ Աքչամը գրում է, որ թուրքական հանրապետության հիմքը դրված է մի ամբողջ ժողովրդի բնաջնջման պատմության վրա[1]: Մուստաֆա Քեմալի և Քեմալական Թուրքիայի պատկերն առավել ամբողջական դարձնելու նպատակով նշենք նաև, որ մոտավոր հաշվարկներով 1919–1922 թթ. ընթացքում քեմալականների կողմից ոչնչացվել ու բռնի թրքացվել են շուրջ կես մլն հայեր:

Մեր ձեռքի տակ եղած փաստերը վկայում են, որ Հայաստանի հարցը քեմալա–բոլշևիկյան հարաբերություններում առաջին անգամ պաշտոնական մակարդակով բարձրացվել էր 1920 թ. ապրիլի 26–ին, երբ Մուստաֆա Քեմալը հատուկ նամակով դիմել էր Վ. Ի. Լենինին: Այս նամակում Քեմալը, փաստորեն, առաջարկում էր բոլշևիկների առաջնորդին՝ բաժանել Անդրկովկասը միմյանց միջև՝ Վրաստանը՝ բոլշևիկյան Ռուսաստանին, իսկ Հայաստանը՝ Թուրքիային[2]:

Խորհրդային Ռուսաստանը ոչ մի կերպ չէր հաշտվում Անդրկովկասը կորցնելու փաստի հետ՝ այն համարելով իր անբաժան մասը: Խորհրդային Ադրբեջանի հետ Ռուսաստանը հաստատում է սերտ բարեկամական հարաբերություններ: Վրաստանի հետ 1920թ. մայիսի 7–ին Ռուսաստանը պայմանագիր է ստորագրում, որով ճանաչում էր Վրաստանի անկախությունը: Նույն բանին էր ձգտում նաև Հայաստանի Հանրապետությունը, սակայն Հայաստանի Հանրապետության ճանաչումը և նրա հետ իրավահավասար պայմանագրի ստորագրումը Խորհրդային Ռուսաստանը կախման մեջ էր դնում հարևան Ադրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի սահմանների հարցի լուծումից: Ճիշտ է, դժվարին ու երկարատև բանակցությունների արդյունքում

1920 թ. հոկտեմբերի 28–ին ստորագրվում է «Հայ–ռուսական բանակցությունների ավարտի և արդյունքների մասին» արձանագրությունը, սակայն հայ–ռուսական պայմանագրի նախագիծն այդպես էլ չի ստորագրվում: Ավելին, Ռուսաստան–Թուրքիա–Վրաստան փոխհարաբերությունների հետագա ընթացքը լուրջ սպառնալիք էր ստեղծում Հայաստանի Հանրապետության գոյության համար: Մոսկվան առաջ էր քաշում Հայաստանի խորհրդայնացման հարցը, իսկ Թուրքիան, ընդհանուր առմամբ դեմ չլինելով դրան, ձգտում էր վերջնականապես նվաճել Հայաստանը:

Քննարկվող ժամանակահատվածի Քեմալական Թուրքիա–Վրաստան փոխհարաբերություններում ուշագրավ է այն հանգամանքը, որ ի տարբերություն Հայաստանի, Թուրքիան Վրաստանին ընդհուպ մինչև 1920 թ. նոյեմբերի վերջերը տարածքային պահանջներ չէր ներկայացնում: Դրա պատճառներից մեկն, անկասկած, Խորհրդային Ռուսաստան–Քեմալական Թուրքիա նկատվող մերձեցումն էր: Սակայն, պատմությանը լավ տեղյակ ընթերցողը բնականաբար հարցնելու է, թե արդյոք միայն քեմալա–բոլշևիկյան մերձեցումն էր պատճառը, որ Թուրքիան 1920 թ. վերջերին դեռևս տարածքային պահանջներ չէր ներկայացնում Վրաստանին, թե՞ կար նաև այլ, շատ ավելի լուրջ պատճառ: Մեր ձեռքի տակ եղած փաստերը միաբերան վկայում են, որ նման պատճառ այնուամենայնիվ կար:

1920 թ. ամռան վերջերին և աշնան սկզբներին Քեմալական Թուրքիան հող էր նախապատրաստում Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմ սկսելու համար: Այդ առումով նրան սկսում է լրջորեն հետքրքրել, թե ինչ դիրք կգրավի հարևան Վրաստանն այդ դեպքում: Մուստաֆա Քեմալը գաղտնի հանձնարարական է տալիս Յուսուֆ Քեմալ բեյին՝ մեկնել Թիֆլիս և բանակցություններ վարել Վրաստանի կառավարության հետ, թուրք–հայկական հնարավոր պատերազմի դեպքում Հայաստանի Հանրապետության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցով:

Յուսուֆ Քեմալ բեյի պատվիրակությունը գալիս է Թիֆլիս և իջևանում «Օրիենթ» հյուրանոցում: Հաջորդ օրը թուրքական պատվիրակությանն ընդունում է Վրաստանի վարչապետ Ժորդանիան և, ապա, արտաքին գործերի մինիստր Գեգեչկորին: Բանակցությունները տևում են ավելի քան մեկ ժամ, որից հետո թուրքական պատվիրակության պատվին ճաշկերույթ է տրվում: Բանակցությունների ընթացքում ձեռք է բերվում գաղտնի պայմանավորվածություն, ըստ որի թուրք–հայկական պատերազմի դեպքում Վրաստանը պիտի բացարձակ չեզոքություն պահպաներ, որի դիմաց թուրքերը Վրաստանին տարածքային փոխհատուցում են խոստանում[3]: Թուրք–վրացական գաղտնի պայմանավորվածության մասին 1920 թ. Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ Կարաբեքիրը հայտնում է Խատիսյանին և նշում, որ դեռ Հայաստանի դեմ պատերազմը սկսելուց առաջ Անկարայի ներկայացուցիչները ի դեմս Յուսուֆ Քեմալ բեյի և Ալի ֆուաթ փաշայի, 1920 թ. ամռանը եղել են Թիֆլիսում և Վրաստանի կառավարության հետ դաշնագիր կնքել, ըստ որի Վրաստանը հայ–թուրքական պատերազմի դեպքում պետք է չեզոքություն պահպաներ, որի դիմաց ստանար տարածքային փոխհատուցում՝ Բորչալուի և Ախալքալաքի գավառները և Արդահանի շրջանը: Կարաբեքիրը Խատիսյանին ցույց է տվել անգամ այն քարտեզը, որի վրա գծված էին Վրաստանի սահ-

մանները՝ համաձայն չեզոքության մասին կնքված վրաց–թուրքական դաշնագրի[4]:

Այն, որ իրոք վրաց մենշևիկները հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին համաձայնության էին եկել նրա դարավոր թշնամիների՝ թուրքերի հետ, որոնք նաև վրաց ժողովրդի թշնամիներն էին, ակնհայտ դարձավ հայ–թուրքական պատերազմի ընթացքում, երբ վրաց մենշևիկները օգտվելով պատերազմի հետևանքով Հայաստանում ստեղծված ծանրագույն պայմաններից, իրենց հերթին ագրեսիա կատարեցին Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում, օկուպացնելով գրեթե ամբողջ Լոռին, Ախալքալաքն ու Արդահանը:

Ինքնին հասկանալի է, որ նման պայմաններում մենշևիկյան Վրաստանը Հայաստանի Հանրապետության հարցում բացահայտորեն հանդես էր գալիս Թուրքիայի դաշնակցի դերում: Ահա հենց սա էր պատճառը, որ Մուստաֆա Քեմալը ընդհուպ մինչև Հայաստանի վերջնական ռազմական պարտությունը (1920 թ. նոյեմբերի վերջ) նպատակահարմար չէր համարելու Վրաստանին տարածքային պահանջներ ներկայացնել: Հենց այստեղ էլ պետք է որոնել 1920 թ. նոյեմբերի 13–ին Վրաստան ժամանած Անկարայի ներկայացուցիչ գնդապետ Քյազիմ բեյի այն արտահայտության արմատները, ըստ որի «…Грузия заслужила наши симпатие[5]: Մի փոքր ավելի ուշ Քեմալ Աթաթուրքը, փաստորեն հաստատելով գնդապետ Քյազիմ Բեյի այս արտահայտությունը, նշել է, թե «Нас объединяют с Грузией не только взаимные симпатии но и единство целей»[6]:

Թուրքիայից Հայաստանի Հանրապետության կրած ծանր պարտությունից ու դրան անմիջապես հաջորդած Հայաստանի խորհրդայնացումից հետո Վրաստանի Հանրապետությունը Անդրկովկասում փաստորեն մեն–մենակ էր մնում մի կողմից քեմալական թուրքերի, իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի միջև: Իսկ արդյունքն, ինչպես ասում են, երկար սպասեցնել չտվեց: Հայաստանի Հանրապետության անկումից մոտ երեք ամիս անց կործանվեց նաև Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը:

Մեր կարծիքով այս ամենից գուցե հնարավոր կլիներ խուսափել, եթե Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հեռատես գտնվեր և անպատասխան չթողներ ոչ միայն Հայաստանի կառավարության, այլև հենց Վրաստանի հասարակական–քաղաքական շրջանակների մի զգալի մասի՝ Քեմալական Թուրքիայի դեմ միասնական ճակատով հանդես գալու ողջամիտ առաջարկները:

Այսպես օրինակ, հայ–թուրքական պատերազմի ժամանակ վրացական «Борьба» թերթը նշում էր, որ «…եթե Քեմալին հաջողվի իրագործել իր ծրագիրը, այն ժամանակ Վրաստանը օղակված կլինի քեմալա–բոլշևիկյան ուժերով»: «Սաքարթվելո» թերթն իր հերթին գրում էր, որ «Վրաստանի ու Հայաստանի զինվորական դաշինքի հարցը պետք է մեր ընթացիկ քաղաքականության հարցը դառնա»: Ըստ «Սախալխո Սաքմե» պարբերականի՝ «Հայաստանի դժբախտությունը մեր Վրաստանի դժբախտությունն է», և որ «Հայաստանի դեմ ուղղված սուրը Վրաստանի ազատությանն էլ է մահացու հարված սպառնում»:

Նույն պարբերականն իր մեկ այլ համարի առաջնորդող հոդվածում մարգարեաբար գրում էր, որ «Հայաստանի կործանումը մեծ դժբախտություն է ու Վրաստանի համար վտանգալից: Փլատակվում է այն ամրությունը, որը այսպես թե այնպես օգնում էր մեզ տաճկական իմպերիալիզմի դեմ մարտնչելու գործում[7]: Ցավով ուզում ենք ընդգծել,

որ վերը նշված մարգարեական խոսքերը դժբախտաբար այդպես էլ հասկանալի չեղան վրացական կառավարությանը:

Այո, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը փաստորեն չկարողացավ հասկանալ նաև Քեմալական Թուրքիայի՝ իր նկատմամբ վարվող քաղաքականության երկդիմությունը, այլապես ինչով բացատրել այն փաստը, որ 1921 թ. փետրվարի 8–ով թվագրված Մուստաֆա Քեմալի «Нас объединяют с Грузией не только взаимные симпатии, но и единство целей» արտահայտությունից ընդամենը մի քանի օր անց թուրքական դեսպան Ալի–ֆուաթը հայտարարում է, թե թուրքերի կողմից Արդահանի ու Արդվինի գրավումը «…Приобретает значения материальной помощи оказываемой турецкой армией ***грузинским рабочим борюшимся за свое освобождение против меньшевисткого правительства»[8]:*** Ստացվում էր, որ թուրքերը մի կողմից խոսում էին Վրաստանի հետ« փոխադարձ համակրանքի ու «նպատակների միասնության» մասին, իսկ մյուս կողմից« նյութական աջակցությունե ցույց տալիս Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ պայքարող վրացի բանվորներին: Այստեղ ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Ալի–Ֆուաթի այս արտահայտությունն արվել է այն ժամանակ, երբ Վրաստանի Հանրապետության գոյությանը հաշված օրեր էին մնացել:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 05.11.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Акчам Т.,** Турецкое национальное «Я» и Армянский вопрос. Москва, 1995, с. 104, 144–145.
2. **Хейфец А. Н.**, Советская Россия и сопредельные страны Востока 1918–1920 гг., М., 1964, – 107 с.
3. **Журнал д'Ориан**, Стамбул 1920, 19 октября, նույնը «Մշակե, Թիֆլիս, 1920, 5 և 11 նոյեմբեր:
4. **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 268:
5. Газета Сакартвелос Республика, 19 ноября, 1920 г.
6. **Сванидзе М.**, Установление дипломатических отношений между Грузией и турецким правительством Кемаля//Грузинская дипломатия, т. VII, Тбилиси, 2000 г., – 152 с.
7. **Է. Ա. Զոհրաբյան**, «1920 թ.–ի թուրք–հայկական պատերազմը և տերությունները», Եր., 1997, էջ 214–215:
8. Документы внешней политики СССР, т. 3, 1959, 556 с.

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ И ОТНОШЕНИЯ РОССИЯ–ТУРЦИЯ–ГРУЗИЯ В 1920 ГОДУ

ВОСКАНЯН ВРЕЖ

Заведующий кафедрой истории Армении и философии Национального аграрного университета Армении, кандидат исторических наук

МЕЛИК–БАХШЯН МГЕР

Начальник управления по регулированию учебной и научно–методической деятельности Армянского государственного университета имени Хачатура Абовяна, проректор

В статье на основе конкретного фактического материала сделана попытка пролить свет на российско–кемальские, турецко–меньшевистско–грузинские отношения, которые были в той или иной степени важны для Республики Армения в 1920 году.

Дата представления статьи: 05.11.2012

REPUBLIC OF ARMENIA AND RUSSIA–TURKEY–GEORGIA RELATIONSHIPS IN 1920

VREJ VOSKANYAN

Head of the Chair of Armenian History and Philosophy of National Agrarian University of Armenia, PhD in History

MHER MELIQ–BAKHSHYAN

Head of the Department of Educational and Scientific–methodological Activities Systematization, Vice Rector of ASPU

The authors of the article, being guided by concrete facts, try to elucidate those fields of Soviet Russia–Qemalist Turkey–Menshevik Georgia relationships, which touch upon the interests of the 1920 Republic of Armenia in this or that way.

Article submission date: 05.11.2012